

## ԷՄԻԼ ԶՈԼԱՆ ԵՒ ՆՐԱ ԵՐԿԵՐԸ

(«ԲԵՂՄԱՍՏՐՈՎԻՒՆ» ՎԵՍՊԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՄԱՊՈՅ ՄԵՍՈՎԹԻՒՆ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ  
ՉՈՐԴՈՒՆՔՈՎԹԵԱՆ)

Էմիլ Զօլան, անտարակոյս, մի մեծ գրական անձնաւուրութիւն է: Գուցէ Վիկոր Հիւգոյից յետոյ Փրանսիական գրականութիւնը չի տեսել մի աւելի ժաղովրդական գրող, քան Բուգօն-Մակարների հանճարեղ հեղինակը:

Զօլան մարմնացումն է մի մեծ գրական ուղղութեան— նատուրալիզմի—ինչպէս Վ. Հիւգոն ներկայացուցիչ էր բօւմանտիզմի:

Անցեալ դարի սկզբներում գրականութեան մէջ թագաւորում էր րօմանիկ հոսանքը, վերջերում գերիշխող հանդիսացաւ նատուրալիստ, իրական ուղղութիւնը:

Մեր նպատակն է բնորոշել Էմիլ Զօլայի գրականական ուղղութիւնը և ցոյց տալ այն խոշոր դերը, որ նա խաղացել է երրոպական գրականութեան մէջ:

Զօլայի տաղանդը անսպառ է: Նա անցեալ XIX դարի ամենապտղատու գրողներից է և ամենաշատ ընթերցուածը: Նա մինչև այսօր գրել է, բացի Բուգօն-Մակարների ու «Երեք քաղաքների» սերիաները, նաև 22 ուրիշ հատորներ—ընդամենը 46 խոշոր գիրք, որոնցից տպագրուած են մի քանի միլիօն օրինակներ և որոնք թարգմանուած են արդէն բոլոր երրոպական լեզուներով: Եթէ իրար վրայ դարսենք այդ բոլոր գրերը, կը ստանանք մի սիւն, որի բարձրութիւնը կը լինի ոչ պակաս քան 150 վերսու: Այս գործը այնչափ պատկառելի է, որ գրականութեամբ հետաքրքրուողը չի կարող չը կանգնել այս վիթխարի աշտարակի դիմաց:

Գրականական աշխարհում, ինչպէս և քաղաքական, գեղարուեստական ու գիտական աշխարհներում, միջին ընդունա-

կութեան, հասարակ տաղմանդի մարդիկ միշտ ընկճուած, հպատակուած, ուղղակի գերի են դարձած լինուամ մէկի հանճարին։ Հիւգօն այդ հանճարիցն էր։

Իր անսանձ ֆանտազիայով, իր կտրուկ ու զօրեղ ոճով, նա անցեալ գարի առաջին կէսի գրական կուռքն էր դառել, որի ասած խոնարհուամ էին ամբողջ սերունդներ։ Գրական աշխարհը նրա Փօրմուլներով էր գելկավարուամ և նրա ուսմունքը պաշտուած էր ինչպէս մարդարէի յայտնութիւն։ Նրա սալօնը մի տաճար էր, որտեղ մարդիկ շնչելով էին խօսուա, սպասելով տանտիրով կրեալուն և որտեղից երիտասարդ տաղմանդները դուրս էին գալիս շացած, հիպնոսուած մեծ վարդապետի փայլով։

1827-ին Հիւգօն, իր կրօմիկ տրագեդիայի առաջաբանի մէջ զետեղեց իր դաւանանքը (profession de foi) բօմանտիզմի մասին, իսկ 1830-ին դուրս թողեց իր Հերենին, որ այդ գրական հոսանքի ծայրայեղ արտայայտութիւնն էր։ Գուցէ մեր դարում ոչ մի գրականական գործ մինչև այդ օրը այնպիսի գլորդիւն չէր գցել, այնքան աղմուկ չէր հանել, որքան այդ անբնական, շինծու, գրաման։ Բօմանտիզմի Փօրմուլան գտած էր։—Նրա արտայայտիչն էին անբնական, բացառիկ տիպեր, շինծու անբնական միջավայր, ծայրայեղ իդէալացումն լաւի ու վատի, բարու ու չարի, հերոսական գործեր, բացառիկ կեանքի մթնոլորտ և վերջապէս խուսափումն այն ամեն բանից, ինչ որ առօրեայ է, բնական է։

Մի աարօրինակ յափշտակումն տիրեց գրականապէտներին։ քննադասոները բառեր չէին գտնուամ այս մեծ գործը գորգարանելու համար։ Դա մի թովշութիւն էր, որ կաշկանդել էր առողջ դատողութիւնը, կրիտիկան։

Այս ընդհանուր հլու հիացման մէջ յանկարծ մի ձայն բարձրացաւ, որ ազդու ոճով բազգրեց բօմանտիզմի դէմ, ցոյց տուեց այդ գրական հոսանքի ամբողջ շինծուութիւնը, ցոյց առւեց, որ հարկաւոր է իջնել եթերքի բարձրութիւնից, որտեղ սաւառնուամ էին բօմանտիկները և իջնել երկիր, ուսումնասիրել իսկական մարդու առօրեայ բէալական կեսարքը։ Նա մի շարք պատկերներով ապացուցեց, որ մարդիկ ոչ հրեշտակներ են և ոչ դեկր, այլ ունեն լաւ ու վատ կողմեր էլ, որ այս առօրեայ մանր մարդկային էակները, այս առօրեայ տաղտկալի կեանքն էլ կարող են առատ ու հետաքրքրական նիւթեր տալ բօմանիւտին և գրամատուրգին։

Այս յանդուզն մարդը, որ սրբապղծուամ էր, հայնոյուամ էր բօմանտիզմը, Բալզակն էր, այդ խոնեմ, խղճուկ, միշտ հալածած

և միշտ աղքատ, գոնէ գուռ ընկած Բալզակը, որին «գրչակ» անունն էրն տալիս հակառակորդները և որ այնշափ ստորացրել էր իր գրիչը, որ «կեանքի պատկերներ» էր վերցնում և յաւակնութիւն ունէր իր այդ նկարներով յեղափոխել գրականութիւնը:

Զօլան նրան անուանում է «Նատուրալիսմի հայր», և իր ուսուցիչը:

Ոչ մի գրականական ուղղութիւն յանկարծ հասունացած չէ ձնուում: Գրականական հոսանք ստեղծելը մի մարդու գործ չէ. մի շաբթ տատանումներից յետոյ են միայն ամրանում ու ճոխանում՝ գրականական դպրոցները: Նոյն տատանումները, նոյն էվոլյուցիան ունեցել է նատուրալիզմը ևս:

Բալզակից յետոյ մի շաբթ, եթէ չստենք հանձարեղ, գոնէ գորեղ տաղանդի տէր մարդիկ կատարելագործեցին ու ճոխացրին Բալզակի գործը մինչև Զօլայի ժամանակները:

Ֆլորէրը, Գօնկուր և Պրայները, Դուքէն, Տուրգենևը \* ) և ուրիշները արդէն պատրաստել էին Զօլայի համար մի փառաւոր ժառանգութիւն. Զօլան ընդունեց այդ ժառանգութիւնը և իր հանձարի ոյժով հասցրեց նրան զարմանալի ճոխութեան:

\*  
\*\*

Արդի գրականական հոսանքները մեծ առնչութիւն ունեն գիտութեան զարգացման հետ: Գիտակցօրէն թէ անդիտակցօրէն գրողները հետևում են գիտութեան ժամանակակից պահանջներին, օգտուում են նրա գիտերից: Նատուրալիստ դպրոցը իրան «գիտնական» տիտղոս է տալիս: Նա հիմուած է (ինչպէս և գիտնական անալիզը) գիտողութեան ու փորձի վրայ— գոնէ այդ յաւակնութիւնն ունի նա:

Զօլան գրականութեան համար ծնուեց այն երջանիկ ժամանակ, երբ ընագիտութիւնը իր զարգացման գագաթնակէտին էր հասած, երբ Մաֆանդին, մեծ կողմ-թերնարը և նրանց հետևողները, իրեւ հիմք ամեն գիտական հետազոտութեան, զրեցին փորձը: Նրանցից առաջ Բիշան, այդ մեծ անատօմիստը, մանրացնել էր մարդուս կազմուածքը, ուսումնասիրել էր միանների ամեն մի թելը, նրա ուղեղի վանդակները, նրա ոսկորի ծուծը. նոյն արել էին բոյսերի ու կենդանիների վերաբերամաբ կիւզիէն, լիննէյը և ուրիշները: Եւ այս գիտերը վերջ-

\* ) Տուրգենևը իր լաւագոյն աշխատութիւնները գրել է Պարիզում և Փրանսիական գրականական դպրոցին է պատկանում իր շատ կողմերով:

նականապէս լցրեցին այն անգունդը, որ բաժանում էր մարդուն միւս կենդանիներից.—պարզուեց, որ մարդն էլ այնպէս է կազմուած, ինչպէս այդ վերջինները աւելի ևս՝ որ այդ երկուսն էլ նոյն քիմիական տարրերից են բաղկացած, ինչ որ հասարակ բոյսերը:

Միւս կողմից կամարկը, Սենթ-իլէրը, վերջապէս Դարվինը քանդեցին մարդու ինքնագոյութեան հնացած թէօրիան և ապացուցեցին, որ նա համեմատաբար նորագոյն կենդանի է երկրիս երեսին, որ նրանից հազարաւոր դարեր առաջ ապրել են կենդանիներ ու բոյսեր, և որ նա կերպարանափոխութեան արդինք է:

Ներվագիտութիւնը ահագին քայլեր արեց, հոգեբանութիւնը վերածուեց հասարակ ֆիզիօգիական (բնախօսական) երևոյթի և գառաւ ուղեղի ֆունկցիա, ինչպէս շարժումն մըկանների ֆունկցիան է, իսկ մարսողութիւնը—ստամոքսի. այսպիսով մարդկային կրթերը ենթարկուեցան անալիզի և նրանցից շատերը բացատրուեցան լոկ ֆիզիօգիական օրէնքներով։ Այս հայեացքները չեն կարող չը յեղափոխել գրականութեան փօրմուլը։

Մարդը փոքրացաւ, ակներև եղաւ, որ նա էլ, բոյսերի ու կենդանիների նման, ենթակայ է կլիմազի, հողի, ջրի, շրջապատող պայմանների ազդեցութեանը, և որ նա ճնշում է ժառանգական որոշ յատկանիշներով։ Եւ այս ներքին թէ արտաքին ազդեցութիւնները կազմում են այն միջավայրը, որին նատուրալիստ դպրոցը այնչափ մեծ դեր է խաղալ տալիս, որ մարդը դառնում է գերի, կամազուրկ մի փետուր, որին դրսի քամին փչում տանում է, որ կողմը կամենում է. կարճ ասած—L'homme est déterminé par le milieu (մարդը միջավայրի պտուղ է):

Երջափայրի այս ընկճող, նսեմացնող ազդեցութեանը աւելանում է և անողորմ ժառանգականութիւնը, որով մարդ ֆիզիքական յատկութիւնների հետ միասին ժառանգում է նոյնպէս և իր նախնիների բարոյական յատկութիւնները։

Միջափայրի ազդեցութիւնը ներսի վրայ վարպետութեամբ ցոյց էին տուել Ֆլորէրը, Գոնկուր եղբայրները։ Զարմանալի բարձրութեան հասցրեց նրա հոգեբանութեան էտիւդը Ստենդալը, որ XIX դարի առաջին կէսի ամենամեծ հոգեբանն է համարում։ Դիտնական բօմանին պակասում էր մի բան միայն. —ժառանգականութեան մեծ ու բարդ օրէնքների ներմուծումն նրա մէջ։

Այդ ցանկացաւ անել էմի Զօլան, կը տեսնենք, թէ որչափ  
յաջողուեց այդ նրան:

\* \*

Այսպէս ուրեմն, Զօլան չը ստեղծեց այն ուղղութիւնը,  
որի պարագլուխն է այսօր: Նատուրալիստ բօմանը պատրաստ  
էր արդէն. Զօլան ճշխացրեց միայն նրան ու մացրեց նրա մէջ  
ժառանգականութիւնը: Քանի վէպերի մէջ (Շուգօն-Մակկար-  
ների սերիան) նա ճգնում է ակներև անել իր հերսոների վրայ  
ժառանգականութեան մեծ օրէնքը: Սրանք բոլորը սերւում են  
մի պահիսովաթ կնոջից (Ադէլայիդ Ֆուրջ), որի հայրը խելագար  
էր: Այս կինը ամուսնանում է իր ծառաներից մէկի, Շուգօնի  
հետ, իսկ սրա մահից յետոյ սիրահարական կապեր է հաս-  
տառում Մակկար անունով մի արքեցող գիւղացու հետ,  
որից երկու որդի է ծնոււմ—Անտուան և Իւրաուլ Այս արմա-  
տից սերւում են երկու ճիւղ—Շուգօններ ու Մակկարներ: Շու-  
գօնները, աւելի առողջ քան Մակկարները, որոնց հայրը ար-  
սեցող էր, թէն առաջինները նոյնպէս պէտք է կրէին իրանց  
վրայ խելագար պապի ու անբնական—պահիսովատ մօր ներ-  
փայնութեան կնիքը Սրանց սերւունդները պիտի ճիւղաւորուեն,  
և քսան բօմանների հերոսներ դառնան, և նրանց մէջ ժառան-  
գական ներվայնութիւնը գնալով սերնդից սերւունդ, հարիւր ձե-  
ւեր պիտի ստանայ, տալով հանճարներ կամ ապուներ, քաղա-  
քական և հասարակական մեծ գործիչներ կամ ստոր սրիկաններ  
ու գողեր, հիստերիս ու խելագարութիւն, ծայրայեղ կրօնամոլ-  
ներ կամ զազմնամաման եղեռնազործներ, կոյսեր ու անառակ-  
ներ,—մի ամբողջ աշխարհ կրքերի ու մոլութիւնների, մի խլը-  
տումն հիւանդուտ էակների, որոնց մէջ բժիշկը գտնում է հա-  
մարեա այն բոլոր ներվային ու հոգեկան հիւանդութիւնները,  
որոնք ուսումնասիրուած են անցեալ դարի վերջի կէսում:  
Այս հիւանդուտ մարդկիկ ընկնում են որոշ շրջանների մէջ, ա-  
մուսնական կապերով միանում են ուրիշ, աւելի առողջ կամ,  
ընդհակառակը, աւելի հիւանդ տարրերի հետ և տալիս են նոր  
սերւունդներ, որոնց մէջ հօրից ստացած հոգեկան ու մուտքա-  
րանայատկութիւնները մեղմանում են, կամ աւելի ևս սաստ-  
կանում մօրից ստացած ժառանգականութեան ոյժով, և փոփոխ-  
ուում ու զանազան դոյներ ստանում շրջավայրի ազդեցութեան  
ներքոյ: Յետոյ նոր սերւունդները խնամանում են իրար հետ և  
այսպիսի հոգեբանութիւնը գնալով աւելի և աւելի բարդուում է  
ու կազմում մի խճճուած ցանց, որ նոյն իսկ Զօլայի ահազին  
տաղանդը անկարող է քանդել և ստիպուած է յաճախ (համար-

եա միշտ) Ալկրսանդր Մակեդոնացու պէս այս Գորդեան հանգոյցը սրի մի յանդուզն հարուածով կարել. Ժառանգականութիւն ու միջնավայր—ահա երկու բանակալներ, որոնք սարկացնում են մարդուս հողին, ճնշում են նրա ուղեղը, կաշկանդում նրա կամքը, Մարդս անգօրացած, կամազուրկ դարձած, կորցրծա այն միակ յատկութիւնը, որով պարծենում էր նա մինչև այժմ—կամքի ազատութիւն, ինենուրոյնուրին:

Սյու էր դեմերմինիզմի, այսինքն այն փիլիսոփայական ուղղութիւնը, որ բացառում էր կամքի անկախութիւնը:

Եթէ մէկը հանճար է կամ ապուշ, բարոյական թէ անբարոյական, մեծ գիտնական, մեծ նկարիչ, սրիկայ թէ եղեռնագործ,—նա մերգաւոր չէ, մեղաւոր են ժառանգականութիւնն ու միջավայրը. Նա ծնուած է որոշ բարոյական սաղմերով, և այդ սաղմերը միայն զարգանում են նպաստաւոր միջավայրի մէջ; Եթէ մէկը սպասութիւն է գործել, ուրեմն նա ուրիշ կերպ չէր կարող վարուել, որովհետև իր նախնիներից նա ստացած էր մարդասպանի սաղմերը, իսկ շրջապատող պայմանները պարաբա հող էին ներկայացրել սրանց աճման համար; Մի քայլ և, և կընկնենք նակատագրի ուսմունքի—ֆատալիզմի մէջ և մարդիկ կը դառնան մաննըքէններ, որոնք շարժում են մղուած ժառանգականութեան անդիմադրելի ոյժից ու շրջապատող հանգամանքների գրգումով:

Ի՞նչ անմիտիթար ուսմունք, ի՞նչ յուսահատական թէօրիա:

Բարեբախտաբար այդ սխալ է, և այստեղ ևս, ինչպէս շատ հարցերում, բանաստեղծը զիտնականից առաջ է ընկել:

Զօլայի մտքի թոփչքը չէր կարող ազատ շարժուել ժառանգականութեան այն նեղ շրջանակի մէջ, որ հազիւ վստահանում էր սահմանել ժամանակակից գիտութիւնը: Եւ նա անխուսափելի կերպով պիտի ընկնէր չափազանցութեան մէջ:

\* \*

Թողլ թոյլ տրուի մեղ մի քանի խօսք ասել ժառանգականութեան մասին, ի նկատի ունենալով խնդրի կարևորութիւնը:

Սյու, գիտութիւնը դեռ անկարող է ժառանգականութեան օրէնքներ սահմանել: Կայ մի շաբլն, մի ենթադրութիւն (որ սակայն դուրս է բերուած գիտողութիւններից), այն է՝ ներկային երեսյթները անցնում են ժառանգաբար կամ նոյնութեամբ, կամ փոխելով իրանց ձևը: Սյապէս օրինակ. մի հիստերիկ (ներվային) կնոջ զաւակները կարող են նոյնպէս հիստերիա ունենալ, կամ թէ չէ լինել տաղանդաւոր երաժիշտ, նկարիչ, կամ

ապուշ, անբարոյական կամ նոյն իսկ ընկնաւոր: Հազուագիւտ չեն այն դէպքերը, երբ եղբայրներից մէկը մեծ տաղանդի ու ճարափիկութեան տէր է (գեղարուեստի, առևարի, արհեստների մէջ), իսկ միւսը զուրկ ամեն տեսակ ընդունակութիւնից, ապուշ, նոյն իսկ խելագար: Այսպիսով արդարանում է այն հայեցքը, թէ հանձարը խելացնորութեան մի ձեւ է, կամ թէ՝ հանձարից մինչև խելագարը մի քայլ կայ միայն:

Յայտնի է նոյնպէս, որ ներվային հիւանդութիւնները ժառանգաբար անցնում են սերնդից սերունդ, և վնալով սաստկանում են, բարդում են, զանազան ձեռք ընդունում ու հասցնում ցեղը կատարեալ վատասեւմն կամ սպառման: Սակայն եթէ այս հիւանդուա, ներվախտոտ ընտանիքի մէջ մտնում է նոր արիւն, այսինքն երբ այդ գերդաստանից մէկը ամուսնանում է մի առողջ անհատի հետ, կարող է թարմանալ առողջանալ, ինչ պէս մի վատառողջ ծառ, որին պատուաստ են անում:

Ահա այն կանուան, որի վրայ Զօլան հիւսել է իր հոգերանութեան խճած ցանցը:

Յիշած ընդհանուր ցուցմունքները բաւական են եղել մի հիւանդուա արմատից տասնաւոր հիւանդական ներվայնութիւններ ստեղծելու, մի ամրող ներվախտաբանութիւն (հերվայ ուսուութեան պահութեան մէջ): Ի՞նչ յանդքանութիւն, ձգտել տաղանդի ոյժով վճռել ժառանգականութեան համարեա անլուծելի համարուած խնդիրը, հետեւել ժառանգական առանձնայատկութիւնների փոխանցման մինչև երրորդ, չորրորդ սերունդը, նորանոր պատուաստների (որոնք կատարուել են ամուսնութեան միջնորդ օտար տարրերի հետ), նորանոր ազդեցութիւնների (կրթութեան, ուսման, շրջանի) միջնորդ:

Ճշմարիտ է, երեխան ծնւում է ժառանգականութեան կնիքը ճակատին, բայց ճշմարիտ է նոյնպէս և այն, որ գաստիարակութիւնը, շրջավայրը, կարող են հիմնովին փոխել և նոյն իսկ գուցէ հէնց բոլորովին ջնջել նրա հեաքերը: Զօլայի հերոսները, ժառանգական այս ներվայինները, նոյնպէս ընկնում են տարբեր կրթութեան և շրջավայրի ազդեցութեան տակ. ինչ ձեւ պիտի ստանայ իւրաքանչիւրի հոգեկան ժառանգութիւնը: Ռ'քան հարցեր, որոնք գեռ իրանց պատասխանին են սպառմ գիտութիւնից:

Գիտութեան փոխարէն խօսում է րօմանը: Մի ուրիշ մեծ հոգեբան, Դոստուեակին, տալով մեղ իր սոսկալի հիւանդական տիփերը, խուսափել է ժառանգականութեան բացատրութիւնից: Զօլան է միայն, որ այս յանդուգն քայլն արեց, և մինք ապամ

Ենք այս «սուրբ վատահութեան» առաջ, որ արդասիք է ներքին ոյժի և ապացոյց տաղանդի գօրեղութեան:

Կրիտիկան կը խմնարհուի մեծ վիպասանի այս անձնավրատահութեան առաջ, որքան էլ չափազանցրած համարէ նրա արածը:

\* \*

Նոյնչափ յափշտակման ու չափազանցման հասաւ «Երեք քաղաքների» հեղինակը նաև միջավայրի և բարք ու վարքի ազդեցութեան մէջ:

Իէալիզմը (իրականութիւնը) դառաւ նրա իդէալը:

Նկարագրել ամեն ինչ, առանց խորութեան, առանց ընտրութեան, պատկերացնել ընթերցողի առաջ այն ամենը, ինչ որ կատարւում է վարագոյրի տակ.—ահա ինչ է արել Զօլան:

Այս հեղինակի արած շրջավայրի, վարք ու բարքի նկարագրութիւնը նմանում են անառօմիստի ու բնագէտի ուսումնասիրութիւնների. Նրա վրձինը հաւասար ոյժով ու հաւասար սիրով նկարում է ամեն ինչ, չը կանգնելով նոյն իսկ ամենակեղութ, ամենատարփական տեսարանների առաջ; Ինչպէս անառօմիսար մանրահատում է մարմնի բոլոր մասերը անխարաբար, նոյնպէս և նատուրալիստը, իրրե կեանի մանրահատող, իրաւունք ունի և նոյն իսկ պարտաւոր է քօղաթափ անել այն բոլոր ստորութիւններն ու կեղտերը, որոնք թագնուած են մեր աշքից շինծու պարկեշտութեան և բարոյականութեան քօղի տակ: Ի՞նչ փոյթ, եթէ գարշահուութիւնը պիտի զզուեցնի մեզ ու մեր սիրաը խանել տայ... \*):

Ոչ մի հեղինակ այդ աստիճան յանդուգն և անսանձ չը գտնուեց միջավայրի նկարագրութեան մէջ. մի քանի կրիտիկոսներ մինչև անգամ նկատում են, որ Զօլան աւելի սիրով է վերաբերում դէպի կեղութ, քան ազնիւ տեսարաններն ու մարդկային կրքերը: Նրանց ասելով այս հեղինակի դրդումով է, որ երեան են եկել մի շարք փողոցային գրողներ, որոնք զարմանալի տաղանդով ու կենդանի ոճով նկարագրում են ստորկրքեր և անբարոյական տեսարաններ և իրանց այդ աղբով ուղղել են արդի եւրոպական հասարակութիւնը...

Անտարակոյս այս մեղադրանքը ծիծաղելի է. մի մարդ չի կարող հոսանք ստեղծել անչուշտ ժամանակի ոդին է, բարոյ-

\*) «Հող» (La terre) վեպի մէջ ալնպիսի անպատկառ պատկերներ կան, որ այդ բօմանը լոյս տեսնելուց իւսուի, Զօլայի ամենատաղանդաբար հետևողներից հինգը երես դարձրին նրանից,

ական հիմունքների վլատակումն է, որ թելագրում է անբարոյական գրականութիւնը, սակայն չի կարելի հերքել նաև այն, որ Զօլան ոչ միայն չի խուսափում տարվական տեսարաններ նկարագրելուց, այլ նոյն իսկ մի առանձին հակումն է ցոյց տալիս դէպի այդ:

Մենք չենք ուզում գնահատել նրա անխսիր նկարագրութիւնների սկզբունքը, այդ մեղ շատ հեռու կը տանէր; Կ'ասենք միայն, որ Զօլան միանգամայն հետևողաբար է վարւում: Այդքան մեծ նշանակութիւն տալով շրջապայրին, նա անհրաժեշտաբար պիտի մանրակրկիտ լինէր. իսկ գիտնական րօման գրելիս, պիտի վարուէր հասարակութեան հետ այնպէս, ինչպէս գիտնականն է վարւում անհատի հետ:

Այդ մանրակրկիտութիւնը Զօլայի ամենաթոյլ կողմն է համարուում, թէև նկարագրութիւնների ճոխութիւնը, գեղարուեստութիւնը հիացնում է ընթերցողին: Ամենակեղաստ տեսարանները նրա վրձինի տակից դուրս են դալիս իբրև մի մեծ վարպետի գործ, այնուամենայնիւ կրիտիկոսը երբէք չէ ներում նրան այդ յանդզնութիւնը, հասարակութեան ստոր կրքերի, տիրող ցեխի երևան հանելը, որ հարուածում է նրանց ամօթշածութիւնը և մոռացնել է տալիս մեծ վիպասանի միւս կողմերը...

Իսկ միւս կողմերը ակներեն են անում մեծ նատուրալիստ գրողի մէջ անսպառ վիպագրական տաղանդ, լաւ ծանօթութիւն հասարակական կեանքի, գիտական նորագոյն հայեցքների, ժառանգականութեան թէօրինների և հոգեբանութեան:

Վատահ կարելի է ասել, որ ֆրանսիական գրականութեան մէջ ոչ չի շօշափել այնչափ հասարակական բարդ խնդիրներ, ինչպէս Ռուգօն-Մակրանների հեղինակը: Նա ցանկացաւ նկարագրել երկրորդ կայրութեան (Նապօլիօն III-ի) ժամանակուայ հասարակական, քաղաքական, ֆինանսական, բանուորական կեսարքը: Եւ նա մտաւ հասարակութեան բոլոր խաւերը, սկսած մեծ քաղաքական մարմիններից (ինչպէս պարլամենտը), մինչև բանուորական նուռաստ համայնքները, մինչև Պարիզի ամենազագրելի որջերը, սրիկանների ու պոռնիկների աշխարհը: Երկրագործը, ածխանանը, արհեստաւորը, վաճառականը, ֆինանսիստը, գեղարուեստագէտը, գրականասէրը, պոռնիկն ու չարագործը,—ամենքը բեմ են դուրս բռուած իրանց իսկական գոյնով, առանց չողոքորթութեան, բայց նաև առանց ինայելու: Զօլայի սուր մանրահատիչը անխնայ կտրատում, քրքրում է հասարակական մարմինները և իր լուսամկարչական պատկերները վերցնում: Ծանօթ լինելով

անտեսագիտական ժամանակակից ուսմունքներին, նա կամեցաւ իր վէպերի մէջ մտցնել տնտեսական խճճուած մեծ խնդիրներ ևս.—կապիտալիզմի բռնակալ սարկացնող ոյժը, բանուոր ձեռքի անզօրութիւնը կապիտալիզմի գէմ կոիւ մղելու համար:

Այդ քսան վէպերը պարունակում են իրանց մէջ մի ամբողջ աշխարհ, իսկական կենաքի հնոցը, որի մէջ մարդիկ իրանց առաքինի ու անբարոյական ձգտումներով, զազրելի ու վսեմ կրքերով կոիւ են մղում իրար հետ, և ամեն մէկը կուում է իր վէնքով—մէկը իր տաղանդի ոյժով, միւսը կապիտալի զօրութեամբ, երրորդը սրիկայութիւնով ու չարագործութիւններով, չորրորդը իր գեղեցկութեան հրապարով: Մի զարմանալի խլրտումն մարդկային էակների, որոնք ստրուկ են դարձած իրանց ժառանգական թեամբ, շրջապատող պայմանների և որոնք նոյնպէս աղջում են միւսների վրայ: Այստեղ մենք տեսնում ենք իսկական մարդկանց դիմակները գէմքերից պոկած իրանց իսկական զիշտափիչ աչքերով ու ստախօս լիրք բերանով: Տեսնում ենք մարդու անկումն, անձնասիրութեան, պատուամիրութեան անկումն, երբ խնդիրը դալիս է կրքի բաւարարմանը, և մի նանաչի ոտերի տակ յատակի վրայ սողում են բօրսայի ու արիստոկրատիայի ներկայացուցիչները, շան պէս հաշարով, միայն թէ այդ պոռնիկը թոյլ տար իր ոտը լիզելու: Տեսնում ենք բարոյական տարրական գաղափարների բացակայութիւնը ողորմելի ածխահանների շրջանում, սև գետնի տակ, զարհուրելի փոսերի մէջ, որտեղ կինը պատկանում է ամենքին, որտեղ աղջիկը, գեռ երեխայ, ժափան երեսին ընծայում է իր կուսութիւնը... ում որ պատահի...

Թուել մի առ մի մեծ վիպասանի շօշափած հասարակական ու բարոյական խնդիրները, պատմել նրա արած սոսկալի մերկացումները, այդ կը նշանակէր զրել նրա ահազին գործի պատմութիւնը—մի բան, որ մեր նպատակից դուրս է:

\*  
\* \*

Վերջացնելով Ռուգօն-Մակկարների երկար սերիան, էմիլ Ջօլան սկսեց մի նոր շարք վէպեր, «Երեք բաղաբ» ընդհանուր վերնադրով (Լուրդ, Հռոմ, Պարիզ):

Պիէր Ֆրօմանը այս երեք վէպերի գլխաւոր հերոսն է: Սա մի քահանայ է, որի սրտի խորքում թերահաւասառութիւն է ծագել: Կաթօլիկութիւնը երջանկութիւն չը տուեց մարդուն, տամանութ դար Փրկչի ուսմունքը ընկել է աշխարհ և գեռ ոչ մի մարդ բախտաւոր չի եղել: Հնացած չեն արդեօք այս ծէսերը,

որոնք կոսապաշտութեան կնիք են կրում: Եւ Պիէրը զգում է, որ իր հոգու խորքերում պակասում է հաւատը:

Նա լսել էր, որ Լուրդ քաղաքում հաւատը դեռ ևս հրաշք-ներ է գործում: Հազարներով ու տաս հազարներով հիւանդներ, տանջուղիներ ու տառապեալներ դիմում են այնտեղ Տիրամօր քարայր և իրանց ցաւերին դարման գտնում: Եւ նա զնում է այնտեղ իր աշքով տեսնելու, ստուգելու իր լսածը, գուցէ ամ-րանայ նրա տառամուռող հաւատը, բայց այդ ճամբորգութիւնը աւելի ևս հիասթափեցրեց ու աւելի թերահաւատ դարձրեց Պիէրին: Մի սոսկալի տանջալից ամբոխ, կուրծքը ծեծելով, ար-տասուք թափելով, չոքէչով սողում էր դէպի այդ անձան քար-այրը ու մի կտոր սիովանք աղերսում իր տանջուած մարմ-նին, իր տառապած հոգուն: Բիւրաւոր կրծքեր մաղթանկներ էին մատուցանում, աղեկտուր հառաչանքները լցրել էին օղը, արտասուքը ողողել էր սրբազն ժայռը, տանջանքի մի աշ-խարհ էր այս, որտեղ ցաւագար մարդկութիւնը, յուսալից աշ-քերը դէպի այս սրբավայրը յառած, թենքը տարածած, երեսը գետնին տրորելով, սպասում էր Տիրամօր յայտնութեան, փըր-կարար լոյսի ծագմանը, որի ճառագայթները պիտի մեռածնե-րին կեանք ներչնչին: Եւ Պիէրը սոսկաց, ինչ, այսքան արտա-սուքից չը հալեցան ապառաժները, և մեռելները չը վերկացան գերեզմաններից: Ուր է ուրեմն հաւատի և աղօթքի զօրութիւնը:

Կաթոլիկ կղերը ճանաչում է այս վայրի անզօրութիւնը, և այնուամենայնիւ շարունակում է շահագործել տղէտ ու յա-սահատ ամբոխի մնապաշտութիւնը:

Եւ Պիէրը վճռում է զնալ Հոռոմ, աչքով տեսնել Պետրոս առաքեալի փոխանորդին, մատուցանել նրան իր «Նորոգուած Հոռոմ» գիրքը, որ պիտի փրկէր Փլատակուող ու մնանկացած կաթոլիկութիւնը: Բայց «յաւիտենական քաղաքը» աւելի ևս յուսահատեցնում է արբային: Այսուեղ, կաթոլիկութեան բուն կենարունում, աիրում է շողոգորթութիւն, կեղծիք, անհաւատու-թիւն, անսասնական կիրք: Չէ, ոչինչ չի կարելի անել, կաթո-լիկութիւնը փակէ է, ահազին ճեղքեր են բացուել նրա պատե-րի մէջ. մէկ օր կը փլատակուի ու տակով կ'անի քրիստոնէու-թիւնը:

Պիէրը վերագառնում է Պարիզ, մի երկու անյաջող փոր-ձեր էլ է անում իր հաւատը փրկելու համար, յետոյ դէն է գը-ցում Փարաջան և ամուսնանում, որպէս զի վայելէ երկրի ըարիքը և ապրի իր համար, քանի որ չը կարողացաւ ապրել ուրիշների համար. այս միութիւնից ծննում է Մարիկօ Ֆրօմանը, որ կը դառնայ «Քեղմնասորութիւն» վեպի ներուր:

Անտարակոյս այս վէպերը գրուած են նորագոյն փիլիտ-փայտական հոսանքների ազդեցութեան ներքոյ; Պէտք է ասած որ վերջին տարիներս եւրոպական պեսսիմիզմը ամրապնդուեր է ու սրբագործուել գրականական միասիցիզմով. Տօլստոյի, Նիչշչի, Շոպենհաուէրի, մանաւանդ ոռուս մեծ փիլիտոփայի հիւանդատար շունչը և բուդդայական Նիրվանի ուսմունքը վարակե են րօմանը և շատ հաւանական է, որ Զօլան ևս զերծ չի մնացել այս հոսանքի ազդեցութիւնից:

Ցամեննայն դէպս «Երեք քաղաքները» բոլորովին առանձին են կանգնած և արգասիք են մեծ վիպասանի մաքի մինոր ուղղութեան:

Ի՞նչ էր ուզում ասել մեզ Զօլան իր այս սերիայով:

Ահա մի մարդ (Պիէրը), որ նուիրել էր իրան կրօնի ուղղով վիպատճանը, յանկարծ գայթակղուելով ու անկարող վիպատճանը յեղափոխել եկեղեցին, փոխում է իր հայեացքները իր իդէալը և, փոխանակ իր անձը հասարակութեան նուիրելու, իր անձնական երջանկութեան ետևեցն է ընկնում: Փորձը բերում է նրան այն եղբակացութեան, թէ իդուր են մարդկային զոհերը, աշխարհը, կեանքը իրանց շաւով պիտի ընթանան, յիմարութիւն է ճգնել գետի հոսանքը կանգնեցնելու: Ետ քաշուենք սպասենք, կ'անցնին դարեր, զիտութիւնը կը գտնի այն բալզամը, որ անմահական ջրի նման պիտի նորոգի մարդկութեան նեխած օրգանիզմը և հանգիստ ու երջանկութիւն սփոփ աշխարհիս վրայ:

\* \*

Ահա թէ ինչ է եղել Զօլայի գործը:

Նա չափազանց հեռու գնաց իր դպրոցի մարդկանցից:

Այս հանճարի թոփչքը այնքան ուժգին էր, որ զեց նրան աւելի հեռու, քան գուցէ ինքը կը կամենար և ամեն ինչ չափազանցրած դուրս եկաւ նրա գրչի տակից: Չափազանցրած է ամենից առաջ շրջավայրին տուած նշանակութիւնը: Նկարագրութեան այդ անյագ ծարաւը տարաւ նրան գէպի աննպատճ ու անմիտ մանրամասնութիւններ, որոնք ոչ ընորոշում են բարք ու վարքը և ոչ էլ մեկնում են հերոսների հոգին, շարժումները:

Ոչ ոք այդ աստիճին չը սարկացրեց մարդուն շրջավայրի առաջ և ոչ ոք այդչափ չը մանրամասեց այս վերջինի նկարագրութիւնը:

Հոգեբանական րօմանը բողոքեց այդ չափազանցման դէմ Բուրժէի լուրջ գրչի տակ \*):

Չափազանցրած է նոյնակս ժառանգականութեան թէօրիան, որի շնծուութիւնը աչք է ծակում: Կրիտիկոնները մատնանիշ են անում նոյնակս և այն առերես տարօրինակ երեսիթի վրայ, որ նատուրալիստ գրողները, չը նայելով իրանց յարձակումներին րօմանտիզմի վրայ, դեռ թափ չեն տուել իրանց վրայից նրա աղղեցութիւնը:

Եւ, ճշմարիտ որ, մի կողմ թողնելով նախորդներին, որնք ապրել ու մնուել էին րօմանտիկ գրականութիւնով, նոյն իսկ Զօլան հոգով հիւգոյական է մնացել: Ովկ ուշի ուշով գիտել, ուսումնասիրել է նրա բազմահատոր աշխատութիւնը, չէ կարող չը զգալ, որ րօմանիստը ամեն քայլում ձգտում է դէպի ինկալականը, և մեծ ոյժով զսպում է իրան, որ չը դաւաճանի իր ընտրած ուղղութեանը: Մարդ զգում է, որ հեղինակը զբանականութիւնից, այն իրականութիւնից, որի ջատակովն է դառել և, ովկ գիտէ, գուցէ իրական աշխարհի այս չափազանցրած մերկացումն նպատակ ունի խեղդել հոգու մէջ ծագած կասկածը, թէ իր ընտրած ուղին լաւագոյնն է:

\*  
\*\*

«Երեք քաղաքների» հերոս, արբայ Պիէր Ֆրօմանը, ինչպէս ասել ենք, թերահաւատութեան մէջ ընկաւ, թողեց հոգեւորական կոչումն և ամուսնացաւ, այս ամուսնութիւնից ծնուեցին չորս որդի, որնք կրում են չորս աւետարանիչների անունները—Ժան (Յովհաննէս), Մաթիէս (Մատթէոս), Մարկ (Մարկոս) և Լիւլ (Ղուկաս):

Այս չորս աւետարանիչը դառնալու են «Չորս ավետարան» (Les quatre évangiles) նոր վիպական սերիայի հերոսները. —Բեղմնաւորութեան (Fécondité) մէջ գործում է Մաթիէօն, Աւեխատանիքի (Travail) հերոսը Լիւլն է, միւս երկու եղբայրները կը դառնան, երեխ, մնացած երկու րօմանների գլխաւոր գործող անձնները:

«Աշխատանիքի» համապօտած թարգմանութիւնը ընթերցողը կը գտնի «Մուրճի» հետեւեալ համարում, բայց քանի որ այդ վէպը կապ ունի «Բեղմնաւորութեան հետ, ուստի մենք համառու կերպով կը պատմենք այս վերջինի պարունակութիւնը, ըստ կարելոյն, հեղինակի խօսքերով»:

\*) Մենք մտադիր ենք ապագայում մի էտիւդ տալ Փրանսիական Հոգեբանական րօմանի մասին:

## ԲԵՂՄՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

(Fee condit é)

(Համառօտ բովանդակութիւն)

Մաթիէն ծառայում էր չնչին ոռնիկով Ալեքսանդր Բօշէնի տանը: Նա ամուսնացած էր Բօշէնի ազգական աղքատ Մարիաննի հետ, երբ Ալեքսանդրը, իր խափտուած գործերը վերականգնելու համար, ամուսնացաւ չափազանց հարուստ, բայց և չափազանց տգեղ կօնստանսի հետ, և երբ Մարիաննի կացութիւնը այս տան մէջ անտանելի էր դառել:

Մաթիէն ու Մարիաննը, բաւական իրանց նուազ միջոցներով, որոնցով հազիր հազ մի կերպ կառավարում էին, երջանիկ էին ընտանեկան կեանքում: Նրանց ամուսնութիւնը լոկ սիրահարական էր, և այս միութիւնից ծնած էին արդէն չորս հրեշտականման մանուկներ, —մի հանգամանք, որ ծաղրի առարկայ էր դարձրել Մաթիէօին գործարանի ծառայողների մէջ: Ամենից շատ ծաղրում էր այս բեղմնաւորութիւնը Բօշէնը, որ իր տգեղ «զոր-ոսկոր» կօնստանսից միայն մի վատառողջ տղայ ունէր, Մօրիս անունով, մահուան կնիքը ճակատին ծնուած: Ծնողները պատկանում էին այն ամուսիններին, որոնք սահմանափակում են որդենութիւնը և լոկ տնտեսական դիտումներով չեն կամ մենում մէկ կամ երկուսից աւելի զաւակ ունենալ: Որդենութեան այս սահմանափակումն մի ախտ էր դառել ֆրանսիական հասարակութեան մէջ, որ գրուատում էր ազգի կենսական ոյժերը: Բայց Բօշէնը և իր կինը համոզուած են իրանց ընսած գիրքի փրկարարութեանը: Խզուր նրանց անային բժիշկ Բուտանը, որ ջերմ երկրպագու էր բազմաթիւ ընտանիքի, թուերը ձեռին ճգնում էր ապացուցել, թէ Ֆրանսիայի ազգաբնակութիւնը գնալով նուազում է, թէ Նա ամման տեսակէտից ետ է մնացել ևրոպական համարեա բոլոր ազգերից:

—Հաշուած է, որ ամմն ֆրանսիացի ընտանիք, պիտի արտադրէ ամենաքիչը չորս զաւակ, որպէս զի ազգաբնակութեան աճումն կարողանայ պահպանել ազգի կենսականութիւնը: Դուք մի որդի միայն ունէք, ուրեմն զուք աղքասէր չէք:

Բայց Բօշէնը բողոքում էր այս մեղադրանքի դէմ.—Ո՛չ, նա էլ է սիրում իր ազգը: Բայց նա չէ կամննում բաժանել, մանրացնել իր կարողութիւնը մի քանի զաւակների մէջ:

Զէ, նրա Մօրիսը պիտի իր հարստութեան միակ տէրը մնայ, որպէս զի ուժեղ լինի, քանի որ ոյժն ու յարգանքը հարստութեան միջոցով է ձեռք բերուում:

Նոյն գործարանում ծառայում էր Մօրանժը, 38 տարեկան մի մարդ, որ մի գեղեցիկ կին ունէր Վալերի անունով ու մի հրաշալի երեխայ, փոքրիկ թագուհին, իր ծնողների հոգին ու շունչը: Ուրիշ զաւակ չէին ուղղում նրանք և երազում էին հարստանալ, մեծ կարողութիւն դիզել, որպէս զի կարող լինեն օժիտի ոյժով ամուսնացնել թագուհուն բարձր դասակարգի մի երիտասարդի հետ, և այդպիսով մտնել բարձր շրջանները:

Նրանք ձգտում էին դէպի այդ շրջանը, երեկոյթներ սարքելով, լաւ կացարան վարձելով և ամեն կերպ ճգնելով իրանց սուլ միջոցներով արիստոկրատների հետ ոտ մեկնել: Բայց Մօրանժի ստացած ոռօնիկը չէր կարող յաղուրդ տալ Վալերիի ախորժակներին, և նրանք վճռել էին թողնել գործարանը ու բանկային ծառայութեան մէջ մտնել:

Խօսակցութիւնն ընդհատուեց բարօնուհի Սերաֆին Լօվիցի երևալով:

Սերաֆինը այժմ քսան և իննը տարեկան մի շիկահեր, գեղեցկագէմ, բարձրահասակ և նազելի կին էր. նրա հարուստ կուրծքը յայտնի էր ամբողջ Պարիզին, նրա կարմիր շըրթունքների վրայ գրոշմած էր մի յաղթանակող ժպիտ, իսկ մեծամեծ, թուխ աշքերի մէջ վառվոում էր հեշտասիրութեան անշիշանելի կրակը:

—Նեղութիւն մի կրէք, սիրելիք, խնդրում եմ ձեզ... Ես եկել եմ ձեր պահնչելի թագուհուն տանելու ցիրկ առաօտեան ներկայացման:

Մաթիէն շատ տարիներ առաջ, երբ որ նոր էր ծառայութիւն մտել Բօշէնների մօտ, սերտ յարաբերութիւն էր ունեցել Սերաֆինի հետ:

Սա Բօշէնի քոյրն էր: Ամենամատաղ հասակից նա արդէն փշացած էր բարոյագէս: Ասում էին, թէ տամնընդինդ տարեկան դեռ չդառած, մի ինչպքի մէջ, անձնատուր էր եղել մի անծանօթի: Յետոյ տեղի էր ունեցել այն տարօրինակ կապը բարօն Լօվիցի, այդ զարմանալի գեղեցկութեան տէր սրիկայի հետ, որի հետ փախել էր ու ամուսնացել և որին մէկ օր սպանուած գտել էին թերլինի որջերից մէկի մէջ:

Ամուսնու մահից յետոյ, բարօնուհին անսանձ կերպով անձնատուր էր եղել իր տռափականութեան, միշտ միջոցներ գործ դնելով, որ խռոսափի յղութիւնից:

Խօսակցութիւնն անցաւ բժիշկ Գօդի վրայ, որի համբաւը դղրդեցրել էր Պարիզը: Սա այն յայտնի խիրուրգն էր, որ մի հիմնական միջոց ունէր կանանց արգելելու զաւակ ծնել:

Մօրանժը մէջ մտաւ.

—«Բժիշկ Գօղը, ախ, այս, կնոջս ընկերուհին պատմում էր նրա մասին։ Ինչպէս երեսում է, նա իր օպերացիաներով ուղղակի հրաշքներ է գործում։ Ամենամեծ տառնարարութեամբ նա բանում է կնոջ որովայնը, ինչպէս կը բանար մի պահարանի դռները, ներս է նայում, ու ինչ որ տեսնում է, կտրում հանում է, յետոյ կրկին ծածկում է, և կինը առողջանում է։ Այդ հրաշալի է»։

Յետոյ նա մի քանի մանրամասնութիւններ տուեց. այդ անում էր ոչ միայն առանց խղճի խայթի, այլ, ընդհակառակը, մի տեսակ պարձանքով. —չի՞ որ նա, հանելով կնոջ զաւակարեր գործարանները, պակասեցնում էր անբախաների թիւը։

Տիկին Մօրանժը ներս բերեց զուգած տամներկու տարեկան թագուհուն. նա, ճշմարիտ որ, հրաշալի էր վարդագոյն մետաքսէ դէրիայով, զարդարած սպիտակ կրուժնվարով, վարդագոյն զլիսարկն էլ զլիսին։

—Օհ, հրեշտակ, բացականչեց Սերաֆինը, ծնողներին փաղպաշելու համար, ևս վախում եմ, որ չթոցնեն նրան շուտով։

Եւ երբ որ Սերաֆինը նստեցրեց երեխային իր սեփական կառքի մէջ ու տարաւ, Մօրանժը պանչացած դարձաւ Մաթիէօին։

—Յանցանք չի լինի արդեօք, եթէ մի ուրիշ երեխայ էլ ծնէր, արդէն երեք հոգի ենք, և այնքան դժուար է փող աշխատելը, ինչ կայ, հարկաւոր է միայն մի քիչ զգոյշ լինել, երբ գրկում ենք իրար։

Սանտերը, ժուլյալիստը, ցոյց տուեց իր նոր րօմանը «Անմահ գեղեցկութիւն» վերնագրով, որի մէջ քարոզում է անգաւակութեամ, որպէս զի գեղեցկութիւնը պահպանուի։

—Նոր կտակարանը չէ ասում աճեցէք և բազմացարուք և լցրէք զաշխարհ։ Այդ ասողը հին կտակարանն է։ Յիտուար ոչ հայրենիք ունէր, ոչ սեփականութիւն, ոչ արհեստ, ոչ ընտանիք, ոչ կին, ոչ զաւակ։ Նա անբերրիութեան մարմնացումն է։ Հենց այդ է պատճառը, որ առաջին քրիստոնեաները զայրոյթ էին զգում գէպի ամուսնութիւնը։ Սրբերի տեսակէտից, կինը միայն ցեխն է և կորուստ։ Բացարձակ կուսութիւն, անա ինչ է քարոզում աւետարանը։ Կոյսը կնոջ իդէալն է, նոյն իսկ մայրութեան իդէալը։ Արդէն ապացուցուած է, որ քանի զարդացած է մարդ, այնքան նա անպտուղ է։ Քանի լայնանում է մարդու ուղելը, այնքան էլ պակասում է նրա բեղմնաւորման ընդունակութիւնը... Նոյնպէս և ազգերը. —լուսաւորութիւնը, նոււազեցնում է նրանց կենսական ոյժը, դանդաղեցնում է աճումն։ Միայն

անզարգացած ու տգէտ ազգերն են, որ դեռ աճում են:

Մաթիէօն լսում էր այս սոֆեստութիւնները, հոգու խորքից բողոքում էր այս այլասեռաման դէմ, որ անխուսափելի կերպով պիտի տանէր Ֆրանսիային դէպի չնջումն: Եւ զաւականութեան սահմանափակման գաղափարը արծարծուած էր՝ տարածուած նոյն իսկ գաւառները, գիւղական ազգարնակութեան մէջ: Կեանքի կոռի դժուարանալը միակ շարժառիթը չէր, որ ետ էր կանգնեցնում ամուսիններին բեղմնաւորութիւնից. մի քանիսները չէին ուզում յղանալ, որպէս զի չը կորցնեն իրանց թարմութիւնն ու գեղեցկութիւնը, միւսները, որպէս զի ետ չընկնեն հասարակական զուարծութիւններից և այլն: Եւ աղամարդիկ, անբաւական իրանց կնոջից ստացած կիսատ բաւականութիւնից, գցում էին իրանց անբարոյականութեան աշխարհը, սպառում իրանց աստուածատու ոյժը անպտուղ միաւորութիւնների մէջ ու տուն դառնում յոզնած, վիթուած ու զզուած:

Մի գիշեր, երբ Մաթիէօն անցնում էր Պարիզի մեծ բուլվարներով, այս զարմանալի իրարանցման մէջ, այն ժամին երբ կաֆէները լցուած են լինում երկու սեոից բաղկացած ամբոխով, որոնք զրօնում են ելեքտրական լուսի տակ, երբ տրօտուարների վրայ խոնում են հազարաւոր սիրոյ ծարաւածներ, որսի ընկած, կատարները տաքացած, որոնելով և բաղձալով անպատասխանատու սէր, թէկուզ մի ժամուայ համար. այն ինչ փողոյի սալայատակը դղրդում է անիւնների գռառոցից ու ձիերի գոփիւնից, ու կառերի երկու հոսանքները մղում էին շատապով մարդկային զոյգեր, մեծ մասամբ գէպի ապօրինի անկոչին, —այդ ժամին մի յիշողութիւն նորագուեց Մաթիէօի մտքում. նա մտաբերեց այն զօրապետի խօսքերը, որ արտասանել էր մի մեծ կռուից յետոյ, գիակներով ծածկուած դաշտը դիտելով, թէ «Պարիզի մի գիշերը միայն բաւական կը լինի այս կորուստը լինելու համար»: Եւ Պարիզը չէ խորհում սրա մասին. ամուսինները զսպում են իրանց, որ սերմը չը բեղմնաւորուի, չորս հարիւր հազար երիտասարդ ոյժեր տարիններով գեգերում են զինուորանոցներում և նոյն չափ աղջիկներ սպասում են սրանց դարձին, մինչդեռ փողոցները, կաֆէները, կաֆէ-շանտանները լի են հազարաւոր ծախու կանանցով, որոնք վաղօրօք անպալութեան են մատնուած: Եւ Ֆրանսիան արագ քայլերով մօտենում է ուժասպառման, այն ինչ փողոցներով հսում է ազգի կենսատու ոյժը:

Ֆրանսիան ամեն գիշեր մի մեծ պարտութիւն է կրում, տալով այնքան զոհեր, որքան կը տար մի պատերազմ:

Բայց այս բոլորը չեն:

Պարիզի ետ ընկած փողոցներում, ոստիկանի աշքից ծածկուած, մանկաբարձունի կամ ծննդասեղի նշանակի տակ պահուում են որջեր, յանցանքի բներ, ուր դիմում են իրանց արգանդի սաղմբ ոչնչացնելու համար և յդի օրիորդը իր ամօթը փրկելու, և անհաւատարիմ կինը իր յանցանքը մարդից ծածկելու, և օրինական ամուսինը զաւակների թիւը սահմանափակելու նպատակով: Պրօֆեսօր Գօդը տասը հազարներով սաղմերէ փշացրել, տասը հազարաւոր կանանց ներքինի, բեղմնաւորութեան անընդունակ է դարձրել իր սոսկալի օպերացիաներու, և մի դանակի հարուածով կարել է մի ամբողջ ապագայ ծառի արմատը: Այսպիսով գիտութիւնը ևս փոխանակ՝ ստեղծելու, սպանում էր: Ֆրանսիան ինքնասպանութիւն էր գործում:

Եւ Մաթիէօն երջանիկ էր, որ ինքը չէր մամնակցում այս ազգաւեր գործին, նրա սէրը գէպի Մարիաննը անսահման էր, և թոյլ չէր տալիս ոչ մի զգուշութիւն, ոչ մի հայիւ: Զորս հրաշալի մանուկները լցրել էին նրա աղքատիկ կացարանը կենդանութեամբ ու երջանկութեամբ: Եւ Մարիաննը յդի էր հինգերորդ անդամ:

Այս յդութիւնը մի նոր հրճուանքի, նոր երջանկութեան ու պարծանքի աղբիւր էր երկու ամուսինների համար: Մարիաննը մինչև յդութեան վերջին օրերը ուրախ ու զուարթ էր և քաջութեամբ ու յուսով սպասում էր ծննդաբերութեան քաղցը տանջանքին ու նոր մանկիկի աշխարհ գալուն:

Մարիաննի երկունքը սկսուել էր, և ամուսինը, սպասելով բժիշկ Բուտանի գալուն, ծննդանի կողքից չէր հեռանում, քաջալերելով, համբուրելով, հազար տեսակ գուրգուրանքով մնումացնելով նրա տանջանքները, երբ ներս մտաւ Մօրանժը, սարսափից այլանդակուած ու խեղդուած ձայնով աղաչեց ուղեկցել իրան մերձ ի մահ Վալերիի մօտ: Մաթիէօն յուզուած թղղեց իր տանջուող կնոջն ու դուրս եկաւ նրա հետ: Ճանապարհին ամեն ինչ պարզուեց, Վալերին յղացել էր, և մարդ ու կին վճուել էին վիժել տալ, ոչնչացնել այն նորեկ անմեղ արարածին, որ աշխարհ գալով պիտի պակսեցնէր Թագուհու բաժինը: Եւ նրանք գնացել էին տիկինն Բուշի ծննդաբանը, որտեղ Վալերիին ենթարկել էին արուեստական վիժումին, որի հետեւ տեսանքը եղել էր սարսափելի արինհոսութիւն, գուցէ և մահ: Կառը կանգնեց, Մաթիէօն ստիպուեց Մօրանժի ետևից վաղել: Մօրանժը մտաւ մի խոնաւ բակ, բարձրացաւ մասյլ ու կեղտոտ սանդուխներով, բացեց կեղտոտ, իւղուած դմերն ու

մտաւ մի սենեակ. ինչ սենեակ. մի կիսամութ, ցած օճորքով, կեղտոտ ու խոնաւ, գարշահոտ բուն, որի մէջտեղը մի թափտի վրայ պառկած էր արդէն անչնչացած Վալերին, արնագամ եղած.—պառկած էր մենակ կիսախաւարի մէջ, առանց մի ցաւակից անձի, նոյն իսկ առանց մի մնջրամոմի, զոհուած զաւակալախութեան ախտին...

Երբ Մաթիէօն, թողնելով խեղճ Մօրանժին մենակ իր սոսկալի կոկիծի հետ, վերադարձաւ իր տուն, Մարիաննը ծնել էր մի արու զաւակ և դեռ ևս դողդողալով քաշած երկունքի ցաւերից, ժպտում էր իր սիրած ամուսնուն:

Ծնուեց մի տղայ, մի առողջ, թմիկի, սիրուն երեխայ, եւ ծնողների երջանկութիւնը կրկնապատկուում է. ինչ փոյթ, թէ միջոցները փաքր են, կառավարուելը դժուարանում է ամեն մի երեխայի հետ, կարիքը աշխատանքի նոր դռներ կը բանաց:

Եւ Մաթիէօն խորհում է նոր աղբիւրների մասին: Սկսում է որոնել այդ նոր գոները, նախատեսնելով, որ չուտով անկարելի կը լինի ապրել փոքրիկ ոռծիկով:

Մի օր, երբ Մաթիէօն իր կնոջ ու երեխաների հետ, անհուն քաղաքի շշմեցնող աղմուկից ու ծնչող մթնոլորտից փախչելով, գուրս էր եկել դաշտը, ու, անտարի եզրին նստած, դիտում էր իր առջև տարածուած ընդհարձակ տափարակը, նրա մոգում յանկարծ յղացաւ, բացուեց մի նոր աշխարհ, մի նոր կեանքի գրաւիչ պատկեր:

Եւ նա վճռեց դամանալ դէպի մայր-գետախնը, գառնալ հողագործ, և այն քրտինքով, որ թափում է անպտուղ կերպով գործարանի քարայտակի վրայ, պարարտացնել այդ հողը, մշակել նրան և գուրս բերել նրա միջից բնութեան առատ ձեռով սփռած բարիքները:

Այս լայնատարած գետինը, Շանտըլէ, պատկանում էր Սանտերին, որ ոչ մի օգուտ չէր կարողանում վերցնել այդ ճահճային գետնից և ուրախութեամբ նրա մի փոքր մասը կը զիջէր Մաթիէօն որոշ պայմանով:

—Ուզում ես, եկ, առաջի քլունգը դնել խփիր, առաց Մաթիէօն կնոջը:

Իսկ սա, ցոյց տալով իր ծծկեր երեխային, պատասխանեց.

—Ոչ, ոչ, ես իմ գործն ունեմ... դնել տուր առաջին քլունգը:

Եւ այս առաջին հարուածը պիտի մկաէր այն ակոսը, որ պիտի բանար փակուած ու ճահճացած աղբիւրները, որոնց ջրե-

բը պիտի իշնէին աւելի ցած, գնային պարարտացնէին չորացած  
աւագւո գետինները:

Այս միջոցին ժերվին, ծծկեր երեխան, քաղցած, սկսել էր  
իր ճչերը:

— լաւ, լաւ, գիտեմ, որ այստեղ ես... դէ, առ, էլ մի  
խլացրու մեղ:

Նա բացեց իր կուրծքը և ծիծ տուեց երեխային:

Այժմ լսում էր միայն երջանիկ մանկիկի մշմչոցը, որ  
շնչասպառ անդադար ծծում էր կաթը, սեղմելով, տրորելով սպի-  
տակ ստինքը, որ աւելի առատ հոսի նու. և կենսատու հեղուկը  
սկսել էր հոսալ, անսպառ աղբիւրի նման, և լսում էր նրա  
հոսանքի ամփերջ մեղմ կլկոցը ու թւում էր, թէ նա իշնում է,  
տարածւամ հեռու, ողողում երկիրը, այն ինչ Մաթիէօն իր  
երկու յաղթանդամ բանուորների հետ շարունակում էր քան-  
գել առուակը... Առուակը բացւում էր պարարտ հողի միջով:  
Շուտով ջուրը կը հասնի աւազոտ շերտերը, նրանց բերրիա-  
ցնելու համար, այն ինչ մօր կաթի փոքրիկ հոսանքը շարունակ-  
ում էր լցուել մօր ստինքից մանկիկի բերանը, ինչպէս մի անըս-  
պառ աղբրակ. նա հոսում էր, դառնում էր միս ու ոսկոր, դառնում  
էր միտք, աշխատանք, ոյժ: Շուտով այս փոքրիկ աղբրակի կլկոցը  
կը խառնուի ազատաւած ջրի ֆշոցին, երբ որ այս ջուրը կը հո-  
սայ ազատ նոր փորած առուակով դէպի այրուած գետինները:

Եւ այս երկու հոսանքներն էլ մի և նոյն են, երկուան էլ  
կեանք են տախիս աշխարհին, անցնելով երկրի երախների միջով,  
իբրև մի մեծ գետ, վերստեղծելով ամեն ինչ կեանքի գարնա-  
նը, սփռելով ամեն տեղ նորաբոյ կեանքեր, թարմութիւն ու  
առաջնութիւն:

Անցաւ երկու ամիս. Ժերվին երկու տարին բոլորել էր  
արդէն և գեղեցիկ գարնանային օրերը զարթեցրել էին բնութիւ-  
նը. Սի առաւօտ Մարիաննը երեխաների հետ դուրս էր եկել  
դաշտը ու ապշած մնացել անսնելով թէ ինչպէս այս մի շարա-  
թուայ արեւ փոխել էր գետնի տեսքը. Ամբողջ արտը, որտեղ  
առաջ միայն ճահիճ էր, այժմ, մատաղ նորածիլ հասկերից փո-  
խուել դարձել էր անեղք նազուկ թաւիշ իսկ երբ որ, մի  
երեք ամսից յետոյ, հօշնն ու Սիգէնը Մօրանժի ու նրա գեղե-  
ցիկ աղջիկ Թագուհու հետ եկան Մաթիէօնց տեսութիւն, նրանք  
չէին հաւատում իրանց աշքերին, Յիշեցին նրանք իրանց առա-  
ջին այցելութիւնը յունուար ամսին, երբ գետինը, սառած—ջնած  
էր, այժմ շփոթուել մնացել էին նրանք այս հրաշալի վերա-  
ծնութեան առաջ, այս յաղթական պղտարերութեան առաջ, որ  
ճահճային վայրենի գետինը փոխել էր սակէ արտի:

Եւ տարեց տարի աճում էր ու բազմանում Մաթիէօի ընտանիքը, աճում էին ու ընդարձակում նոյնպէս և նրա կալուածները. արտերը աւելանում էին արտերի վրայ, ու Սիդէնի ահագին տարածութեան գետինը կամաց կամաց անցնում էր Մաթիէօի ձեռքը, որ չորացնում էր ճահիճները, ջրում էր չոր աւազոտ տեղերը, քանդում էր—շուռ տալիս գետնի շերտերը, այն ինչ փրկարար հեղուկը—կենսատու ջուրը ամեն տեղ կենդանութիւն էր սփոռում: Այժմ սերմն ընկնում էր պարարտ հողի վրայ, որ տալիս էր նրան իր անսպառ ոյժը, աճեցնում ու լցնում հասկերը ցորենով: Բնութեան երակների միջով հոսում էր այն յաւիտենական կեանքը, նոյն կեանքը հոսում էր Մաթիէօի երակներում, ու լցում էր նոր սերնդի մէջ: Եւ կեանքը կեանք էր ծնեցնում ու յաղթող հանդիսանում մահուան կռուի մէջ:

Որդիքը մեծացան, ամուսնացան, նոյնպէս բեղմնաւորուեցին, նոյնպէտ տուեցին նորանոր սերունդներ, որոնք պիտի շարունակեն կեանքի անդիմադրելի ու միշտ յաղթական ընթացքը սերունդների միջով մինչև յաւիտեան, ինչպէս այս հողը, որին կպած է մարդը և որից անկարող է պոկուել, կը շարունակի անդադար բեղմնաւորուել ու մայրանալ: Եւ այս մեծ գործը, այս լաւագոյն գործը, բեղմնաւորութեան գործը ընդարձակում էր թէ հողի վրայ և թէ կնոջ միջով, արհամարհներով կորուստները, պատրաստելով մասնդ նոր եկող էակի համար: Եւ մարդըն ու հողը անդադար քրանելով ու տանջուելով, բայց ոգեսրուած սիրով, անսահման կամքի ոյժով, զիմում էին դէպի նորանոր կեանքներ, նորանոր յոյսերով լցուած, Մարիաննի բեղմնաւորութիւնը առակ էր զառել Քառել Քառելու երերդ աւարեկան հասակում նաև իր առաներկուերորդ որդին ծնեց, բոլորին էլ աննրում էր իր կաթով, բայցը առաւմ էին, մայր ընութեան գործում, ամենքը զարծում էին, աշխատում, օգնում Մաթիէօին: Տունը լցուել էր ամեն տեսակ բարիքներով, լայնատարած գետինը մշակուած, անտառները լցուած խաշներով: Այժմ Մաթիէօն և Մարիաննը նահապեատկան ծնօղների պէտ շրջապատուած էին մի քանի սերունդներով, յարգուած ամենքից, ճանաչուած զլուկա և անսահման աէր: Խրանց որգոց միջոցով Ֆրումանները տիրեցին ամբողջ այս երկրին, իսկ ազաներից մէկը Նիկոլան գնաց հեռաւը երկիրներ, Աֆրիկայի խորքերը և այնտեղ հիմնեց մի մեծ գողթականութիւն, որ աճեց ու կազմեց մի նոր ընդարձակ հայրենիք Այսողէս, կեռնքը, արքազան մայրութիւնը, բեղմնաւորութիւնը ճեղքում էր տարիներն ու յաղթանակով առաջ ընթանում միշտ ատեղծելով, ծանր աշխատան-

քի ոյժով, այն ինչ այստեղ, Պարիզում, ամեն ինչ փլատակւում էր:  
Բօշէնի, գործարանատիրոջ միակ որդին, Մօրիսը, հօր ու  
մօր միակ յօյսը, որի համար ծնողները ճնշում էին միլիոններ  
դիզել և ուրիշ զաւակներ չէին արտադրում; որպէս զի այս մի-  
լիոնները չը բաժանուին, չը մանրանան,—այս միակ էակը, որ  
գեռ ընդունակ էր կապել միմեանց երկու օտարացած ու իրար  
ատելի ծնողներին, այս Մօրիսը մէկ օր գտնուած էր իր ան-  
կողնում անչնչացած:

Նրա մահից յետոյ ծնողների սիրութ լցուեց սև յուսահա-  
տութեամբ, ու սոսկալի զղումն սկսեց լավիկ նրանց հոգին,  
զղումն, որ իրանց ամբողջ ամուսնական կեանքի ընթացքում,  
Մօրիսի ծնունդից յետոյ, դիտմամբ ժխտել էին բնութեան օ-  
րէնքները, հեռացնելով բեղմնաւորութիւնը: Այնուհետև կօնս-  
տանսի մէջ սկսուեց մի կատաղի տարածամ ծարաւ յղանալու,  
մի զաւակ ևս ծնելու, և նա, զսպելով իր զգուանքը, որ նա  
զգում էր դէպի Բօշէնը, մօտեցաւ նրան շարունակ երկու եր-  
կար ու տանջալից տարիներ, բայց իզուր, արգանդը մնաց ան-  
պտուղ ու սև քօլը ընդ միշտ ծածկեց կեանքի հորիզոնը...  
Բարօնուհի Սերաֆինը, աւելի և աւելի խրուելով անառակու-  
թեան մէջ, հեշտասիրութեան կրակով լափած, վճռեց վերջ դը-  
նել յղանալու սարսափին, որպէս զի աւելի ևս անսանձ կեր-  
պով անձնատուր լինի իր տռփական կրքին, և որ բեղմնաւո-  
րուելու հնարաւորութիւնը չը թունաւորի այլ ևս սիրոյ բոպէ-  
ները: Եւ նա էլ դիմեց մեծ խիրուրդ Գօղին, խնդրեց, որ  
հանի նրա արգասավորութեան գործարանները, դէն դցի այն  
զաւակատունը, որ նրանց անդադար սպանալիքի ու ահի մէջ էր  
պահում: Օպերացիալից յետոյ այս գեղեցիկ, զուարթ, յաղթան-  
գամ ու փարթամ կինը արագ սկսեց թառամել, կորցնելով իր  
թարմութիւնը, նիհարեց, կինձիոնները ծածկեցին նրա երրեմն  
փայլուն դէմքը, ստիճանները չորացան ու կազմն կրծքին, և նա  
ինքը ամբողջովին չօրացաւ, կմախրացաւ, պառաւեց:

Աւելի ևս տիսուր վախճան ունեցաւ սիրուն թագուհին:

Տասներկու տարեկան հասակում նա արդէն ուշադրութիւն  
էր գրաւում իր գեղեցիկ կազմուածքով, նուրբ դիմագծերով ու  
ֆիզիքական վարդամ զարգացումով: Բարօնուհին միանգամայն  
տիրապետել էր այդ երեխային, միշտ իր հետ ման էր ածում թատ-  
րոններ, ցիրկ, զանազան հասարակական տեղեր, ծանօթացնում  
իր շրջանի տղամարդկանց հետ, ու կամաց-կամաց աննկատելի  
կերպով պատրաստում էր նրան անբարոշական կեանքի համար:  
Տասնըհինգ տարեկան հասակում թագուհին արդէն լաւ կազմա-  
կերպուած ու հասունացած մի գեղեցկուհի էր և արդէն մտեր-

մացել էր բարօնուհու հետ, ու նրանց մէջ այլ ևս գաղտնիք չը կար: Խեղճ Մօրանժը, որ կնոջ սարսափելի մահից յետոյ, ապրում էր միայն Թագուհու համար ու Թագուհու շնչով, երջանիկ էր Սերաֆինի այս բարեկամական վերաբերմամբ, նա անսահման ազատութիւն էր տուել իր աղջկան: Սերաֆինը քաշ տուեց այդ երեխային հարիւր տեսակ կասկածելի ու կիսապարկեցտ տեղեր և կատարուեց այն, ինչ որ անխուսափելի էր—Թագուհին յղացաւ: Սարսափած իր դրութիւնից, խեղճ աղջիկը լսեց իր հովանաւոր բարօնուհի Սերաֆինի խորհուրդը և արեց այն, ինչ որ արել էր այդպիսի անբախտ վախճանով նրա խեղճ մայրը.—իրան ենթարկեց սարսափելի օպերացիայի, որ ապօրինի սաղմը հանելով, պիտի վերադարձնէր նրան իր կուսութիւնը, դոնէ աշխարհի առաջ:

Բայց անողորմ բախտը ուրիշ կերպ էր տնօրինել—օպերացիայի գիշերը մի երակ բացուեց ու խեղճ զոհը իր մօր նման արնագամ եղաւ:

#### Կանգնած մնաց միայն Մաթիէօն:

Նա մի աղքատ էր և յաղթեց հարուստներին. նա քաղեց այն սերմների պտուղը, որ յուսափց սրբով առատ սփռել էր ամեն տեղ: Իր որդի Դրնիսի միջոցով նա նուածել էր Բօշէնի մեքենաների գործարանը, որի մէջ անդադար դղրդում էին մեքենաները, կռում էին ու դիզում միխօններ: Սիդէնների մեծ պալաաները այժմ նրա միւս որդի, Ամբրուսագի, ձեռքն էին, աւելի ճոխացրած, զարձած կենարն մի ահագին առևտրական տան, որի ճիւղերը տարածուած էին երկրիս չորս կողմը: Գրեգուարը տէր էր գառել Լըպայէօրի ջրազացին, զարմանալի ճոխութեան հասցրած, հարստացած ու մեծացրած, նորադոյն մեքենայական ոյժով բանող: Այն ինչ Շանտըրէէի անսահման դաշտերը չարունակում էին արտադրել անսպառ հարստութիւններ ժերվէի խելացի կառավարութեան տակ, ժերվէի, որ կամնցել էր շարունակել հօր յաղթանակող մեծ գործը:

Եւ Մաթիէօն ու Մարիաննը ձեռ ձեռի տուած իրանց այս ահագին ստեղծագործութեան առաջ նմանում էին հրաշալի հերոսների, որոնք եղել էին միշտ բարի և ուժեղ, որոնք իրանց առատ պատղարերութեամբ յաւիտենական կեանքի կռուի և յափտենական արտասուքի միջով կարողացել էին տալ այնքան կւանքեր, այնքան երջանկութիւն և յոյս:

Տօնուում է Մաթիէօնի ու Մարիաննի աղամանդեայ պասկը: Նրանց ամուսնութեան եօթանասուններորդ տարեդարձը:

Անդադար ամեն կողմից գտլիս էին նահապետների զաւակները, նման ծիծեռնակների, որոնք գարնան բացուելուն վերադառնում էին իրանց բունը: Շարունակ կառքերը գետին էին իջեցնում նորանոր ընտանիքներ,—և մանկանց զիսիկների ալիքները լայնանում էին անդադար: Զիւնահեր պապերը բերել էին իրանց թոռնիկներին, որոնք հազիւ ոտի էին կանգնել. սիրուն պառաւ կանանց ծաղկափթիթ աղջիկներն ու թոռները իջեցնում էին կառքերից, կային գեռ յղի կանաք. աղջիկների ծնողները բերել էին փեսացուներին: Ամենաքը ազգականներ էին, արենակցներ: Արենակից չորս սերունդ կազմում էին մի ընտանիք, մի փաքրիկ ազգութիւն, որոնք գումարուել էին այս տեղ մի հազուազիւտ, մի չը լսած խնջոյք կատարելու.—աօնելու ամուսնութեան, սիրոյ տարեդարձը մի զոյզի, որից սերուել էին այսքան կեանքեր:

Եւ ահապին, անծայր սեղանը բացուած էր բացօթեայ նօհիների տակ, լայնատարած Շատըթէի դաշտում, որ ամենքի ընդհանուր ծննդավայրն էր եղել:

Երբ Մաթիէօն ու Մարիաննը երեացին արևի շոզերի տակ, ծաղիկներով զարդարած շտարուանի մօտ, ամենքի կըրծքից դուրս թուաւ այս բացականչութիւնը.

—Կեցցէ հայրը, կեցցէ մայրը, երկար կեանք հօրն ու մօրը: Թէ թէի տուած, սեղմուած իրար, ինչպէս անբաժան ամուսիններ, նրանք քայլել էին կողք կողքի եօթանսասուն ձիգ տարիներ: Այսպէս էլ թեակցած կանգնած էին այժմ արտասուզով աշքները լցրած ու ժպտում էին այս բարգաւած գերգաստանին, որ իրանց սիրոյ ծնունդն էր:

Եւ բացականչութիւնները շարունակում էին: Յանկարծ ձայները լուցին, ճաշկերոյթը դադարեց: Մի տարօրինակ երեւոյթ գրաւեց ամենքի ուշադրութիւնը:

Մի անծանօթ, ժպիան երեսին, արագ մօտենում էր: Ոչ ոք չէր տեսած այդ երիտասարդին:

Նա մօտեցաւ Մաթիէօին ու Մարիաննին և բարձր ձայնով ասաց.

—Բարի լոյս, մեծ-հայր, բարի լոյս, մեծ-մայր: Ես էլ եմ եկել ձեր ինջոքին մասնակցելու:

Մաթիէօն դողդողալով ոտի կանգնեց.

—Ո՞վ ես դու, որդի, որ ինձ մեծ-հայր ես անուանում եմ ինձ այդքան նման եմ:

—Ես Դօմինիքն եմ, ձեր որդի Նիկոլայի մեծ տղան, ես ապրում եմ միւս ֆրանսիայում:

— Ուրեմն, որդեակս, քանի որ գու մեր որդու որդին ես,  
Եկ համբուրիր մեղ և մասնակից եղիր մեր խնջոքին:

Եւ ծերունիները յուզուած զբկեցին, համբուրեցին այս զաւակին, որ այդպէս անակնկալ կերպով եկել էր նրանց երջան-կութիւնը կրկնապատկելու համար, եկել էր այն հեռաւոր երկից, որտեղ բազմանում էր ու աճում իրանց սրտի, իրանց մարմնի կտորներից մէկը, կազմելով մի նոր ազդ, մի մեծ զադ-թականութիւն, հասարակածի կիզիչ արեկ տակ, տէր դառած անսահման կուսական երկրների: Եւ երբ որ խնջոքը վերջացաւ, Դօմինիքը իր հրաժեշտը տուեց, որպէս զի վերադառնայ իր հայրենիքը. յուզուեց ծերունիների սիրտը, որովհետեւ այս անգամ անջատումը յաւիտենական էր: Սակայն շուտով կակիծը տեղի տուեց հոգու անդորրութեան—նրանց վիշտը սփոփում էր այն համոզմունքը, որ երկար տարիների ընթացքում կատարել են մի մեծ փառաւոր գործ, տալով երկրին ու մարդկութեան անսպաս ահագին մի ծառ, որ գեռ ես պիտի ձիւղաւորուի անսահման ժամանակի ընթացքում, տալով անհամար կեանքեր: Եւ իրանց անկած ծառը տարածում էր իր ձիւղերը հին Ֆրանսիայի մայր հողից մինչև ծովերի այն կողմը, գէպի անարատ, կուսական Աֆրիկայի անհուն տարածութիւնը, որ պիտի նոյնպէս պաղաւորէր և դարձնէր մի նոր, աւելի ընդարձակ, աւելի հարուստ, աւելի թարմ Ֆրանսիա:

ԲԺԳ. Վ. ԱՐԾՐՈՒԻՆԻ